Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Տանձավերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի զինղեկ (0,5 դրույք), դասվար (19 դասաժամ), ռուսաց լեզու (10 դասաժամ), պատմություն (13 դասաժամ), հասարակագիտություն (4 դասաժամ), աշխարհագրություն (6 դասաժամ), կենսաբանություն (5 դասաժամ), քիմիա (6 դասաժամ), ֆիզկուլտուրա (10 դասաժամ), երաժշտություն (4 դասաժամ), կերպարվեստ (1 դասաժամ), ԹԳՀԳ (6 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում,
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. սեպտեմբերի 11-ից մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի <<Տանձավերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցե Սյունիքի մարզ, Կապան համայնք, բնակավայր Տանձավեր, փողոց 4, շենք 22:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 84-10-70 հեռախոսահամարով: